BESTELLT 20.9.95 10-11 V


ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]


*Ամեն բան ժողովրդի մի-ջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար։*

*Իւրաքանչիւրի՝ եւ ընդհանուրի հաստատուած բարեկեցիկ կեանք—ահ է, ճշմարիտ ազատութիւն։*




ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ . . . . 5 Ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻՒԱՆ . . 3 "
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . ½ "


*Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնդ։*

*Արեան ճանիճներ - անձ ազատութեան ճանապարհն։*

*Ժողովուրդ, մի աղերսեր, այլ պահանջիր եւ ձեռք բեր։*


ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 4, ՕԳՈՍՏՈՍ, Nr 4 | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ


## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ՐՈՊԷՆ.



ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ (ԱՆԳԼԻԱՑԻՆ). — ՀՈՐԸ ՓՈՐԵՐ ԵՍ,
ԹԱՂԵԼՔԻ ԱԼ ՔԵԶ ԿՕԳՆԵՄ.



Ո՛Չ, ԴՈՒ ՉԵՍ ԿԱՐՈՂ ԽԱՆԳԱՐԵԼ ԱՐԵՒԻ ԼՈՅՍԸ։

րի տարուեցան Հայոց ազգի „ամենամեծ փառաց համար“. պէտք է անոնց անունները անմահացնել, պէտք է անոնց տեղ նորեր պատրաստել… Պոլսեցիները մեծ եռանդեամբ կաշխատին, անդուլ կաշխատին…. Տարին կանցնի Սասնոյ կոտորածէն ի վեր և, աւետիս ձեզ, Հայեր, ազգասէր պոլսեցիներու աշխատութիւնները պսակուած են… Նորածին մանուկները պիտի մկրտուին։

—Երախայս զի՞նչ խնդրէ։

—Հաւատք, յոյս, սէր և… Աղաւտու-

թիւն (վերջին բառը դողդոջուն, հազիւ լսելի ձայնով մը դուրս կելնէ յանդուգն յեղափոխական կնքահօր բերնէն)։

Երախային անուն պիտի տրուի. Նորածինը աղջիկ է. Սասունի դէպքերու ներշնչման տակ ծնած է. ուստի բնականաբար Սասունցիի անուն պիտի կրէ։

Աղջկան անունը կը տրուի Շաքէ։

Այս նշանաւոր ազգասիրական ցոյցերը մեծ եռանդով կը շարունակուին Կ. Պոլսոյ մէջ. շատ նորածին աղջիկներու անուն տրուած է Շաքէ,

Հուռէ, Խզամ, Ալթուն, Մանիշակ…

Ի դէպ. մանչ տղաներու Հնչակ անունը գնողներ ալ կան. կատակ մի կարծէք, ճշմարտութիւն է։

Պիտի տեսնէք թէ ինչ հրաշքներ պիտի գործեն Կ. Պոլսոյ մէջ այդ ճէօն Սասունցի ամազոնները….. քանի տարիէն։

Աստուած պակաս չընէ Կ Պոլսոյ մեծապատիւ ազգասէրները։

ԽԱՅԹՈՑ.

ԼՈՆԴՈՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.

մաքսախոյզ) կառքերից վար էին իջեցնում բոլոր ուղեւորներին և կառքի խորշերում կոմիտաջի փնտռում։ Նրա՞նք հայհոյում էին, նախատում գեավուրներին, բայց համարձակախօսների վզուկթին տալիս, նրանց վրայ մի հասարակ թուղթ գտնելիս մեծ հոխորտութեամբ տանում էին կառավարութեան սերայը, իսկ իրան բանտ ուղարկում։

Միւթէսարրֆ նոր նոր էր գալիս իր պաշտօնատեղին, երբ արդէն արեւ բաւական բարձրացել էր։ Հարէմի գգուանքները և նրա միջավայրի մեղկ ու թոյլ ազդեցութիւնը մի տեսակ թմրութեան էին ենթարկել նրան, որից կարծես չէր կարողացել տակաւին արթնանալ։ Նրա «դէֆդէրտարին» ամենայն համբերութեամբ հետեւում էր իր բէկ էֆէնդիին, որի աչքը յօրանջելուց, չէր բացվում։ Իր պաշտօնատունը մտնելուց առաջ նա մի քանի հրամաններ տվեց կառավարութեան շէնքի առջեւ բարեւ կանգնած պաշտօնեաներին, որոնք թիւրքական շողոքորթութեամբ գլուխ տվին և «թէմէննահ» արեցին։ Պաշտօնատունը մտնելուց վերջ էլ նա իր ծառային հրամայեց, որ իրան համար ղահվէ և նարգիլէ պատրաստէ։ Ծառան գլուխ տվեց և հեռացաւ։

Օդը տարօրինակ ազդեցութիւն էր թողնում այդ օրն. ամբողջ մթնոլորտը մի տեսակ մշուշով էր լցված, որի միջով արեւն աւելի այրող ճառագայթներով էր թափանցում։ Միւթէսարրֆը շոգի ազդեցութիւնից սաստիկ նեղված՝ բաց արեց իր կուրծքը և սկսեց ման գալ իր սենեակում։ Ինչպէս երեւում էր իր այդ գիրքն էլ որ և է օգուտ չունեցաւ. նա շոգից զատ մի ներքին և անորոշ նեղութիւն էր զգում, որը երբեմն-երբեմն կատաղութեան նշաններով պատկերանում էր, աչքերը տարօրինակ կերպով փայլում էին իր ընդիրակ ու կիտված յօնքերի տակից, և խո-

ժոռադէմ՝ նա սպառնական արտայայտութիւն էր կրում։ Այդ միջոցին նա աւելի արագարագ գնում գալիս էր սենեակում և իր քթի տակից անըմբռնելի մրթմրթում, երբեմն ձեռքերը վեր բարձրացրած զանազան շարժումներ էր անում, ոտքերը տախտակամածին խփում, ինքն իրան խօսում։ Նա հէնց այդ վիճակում էր, երբ դուռը բացվեց և ներս մտաւ մի ոստիկան պաշտօնեայ, ձախ ձեռքը սրի երեխակալին վրայ դրած, և աջ ձեռքը մինչև գետին պարզելով, բարեւեց փաշա էֆէնդիին։ Փաշան նախ չը տեսածի եկաւ և մի քանի անգամ էլ շարունակեց իր երթեւեկն առանց բարեւն առնելու, այս կանգ առաւ սենեակի կենտրոնում, ջղոտ ու չորացած մատներով ճակատը շփեց և ոստիկանին նոր տեսածի նման բացականչեց.

—Ա՛, այդ դու ես, Խուրշիդ, որ և է լուրեր ունե՞ս։

—Բէլի, էֆէնդըմ, բանտը լցվեցաւ, ուզում էի հարցնել, թէ ո՞ւր տեղ պէտք է լցնել միւս ձերբակալված գեավուրներին։

—Հըմ… կատաղութիւնից շրթունքները և պեխերն ծայրը սկսաւ կրծոտել Միւթէսարրֆը։—Ախոռի մէջ որ և է անասուն կա՞յ, եթէ կայ, ուրիշ տեղ կը տանէք և այնտեղ կը լցնէք։

—Բայց 60-70 հոգի են, փաշա էֆէնդի, մէկ ամբողջ խոզի երամակ։

—Մի կերպ տեղաւորեցէք, կէս ժամից հարցաքննութիւն կսկսի և կարելի է այն ժամանակ մի մասը թողնելու պէտք լինի։ Բայց, խօսքը փոխեց Միւթէսարրֆը իր ձայնին փաղաքշական ձև տալով, ինչպէս երեւում է, բազտ ու համեղ պատառներից ես ընտրել. դէմքիդ արտայայտութիւնն այդ բանը մատնում է։

—Գեավուրն առանց խաղի չը լինի, փաշա էֆէնդի, նրանց ամենաթշուառ կեանքերի վարողներից էլ կարելի է մի բան պոկել։

—Ես քու վրայ վստահ եմ, ղօչաղ ես, քարից էլ ջուր կարող ես հանել, գնա և ուզածիդ պէս կարգադրիր, հաշիւն երեկոյին մեր տանը կը տեսնենք։

Ոստիկանապետը գլուխ տվեց և դուրս եկաւ։

Բակի դռան շէմքի վրայ նրան հանդիպեցին Բաշ-քեաթիբը, Մուդդաի-Ումումին և Միւսթանդըգը։

—Լաւ տեսակցե՞ս ժողովել, Խուրշիդ, տաց Բաշ-քեաթիբը, ցոյց տալով բանտի բակում հաւաքված հայերին։

—Ես վստահ եմ, որ ամենալաւերը ներսը պահցու է տվել, որ չը լինի թէ ձեռքեցը փախչեն, աւելացրեց Մուդդայի-Ումումին։

—Մինչև այսօր ինչը գէշ տեսակից էի հաւաքել, որ սրանց էլ գէշերը հաւաքէի, ժպտալով պատասխանեց Խուրշիդը։

—Այսօր մեզ մի-մի մատաղ կը հրամցնես, այնպէս չէ՞, հարցրեց Միւսթանդըղը։

—Մատաղային ինչ կը լինի. հետն էլ պէտք է մի ոչխարի կռնքից բրդօլմա, տաց Մուդդայի-Ումումին։

—Երկուսն էլ վատ չէն լինիլ, խրախուսեց տեց Բաշ-քեաթիբը։

—Ա՛յ քեզ բան, բացականչեց Խուրշիդը. համբերեցէք քիչ, էֆէնդիներս, «հազիւ իշուկին պայտը ձեռք գցած՝ ուզում էք և հաջ գնալ»։ Տեսնենք ձեռքից ինձ բաժին պիտի աւելնա՞յ, յարեց նա խորամանկ կերպով։

—Ե՛, մի մատաղի համար այդքան նաղ պէտք չէ, ես երաշխաւորում եմ, միջամտեց Միւսթանդըգը, որ Խուրշիդն այդ պատիկ բանը կը կատարէ. իրիկուան դէմ մատաղն և բրդօլան բերել կը տայ, այնպէս չէ՞, դարձաւ նա դէպի ոստիկանապետը։

(Կը շարունակվի) Վ.Ի.Թ.